## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
19 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 30

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Համայնքային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի,Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ,7-րդ կետերի,«Նորմատիվ իրավական ակտերի մասին»օրենքի 37-րդ հոդվածի,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը,համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել՝ հավելավճարի կիրառման կարգը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու, կամ համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների (առնվազ նիհնգ տարի) աշխատանքային ստաժ ունեցող համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ:
2. Սահմանել հավելավճարի չափ՝պաշտոնային դրույքաչափի 10 տոկոսի չափով:
3.Ուժը կորցրած ճանաչել Ակունքի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 11-ի«Ակունքի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնային դրույքացափի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը եվ չափը սահմանելու մասին» թիվ 43 որոշումը

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՈՌ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ